Հավելված 2
2026թ. «01» «21»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼԿԼՄՍ-8/26 պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼԿԼՄՍ-8/26**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Սուփանավան |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼԿԼՄՍ-8/26 |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակացված** | 01.01.2026 – 31.12.2026 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.04.2026– 30.06.2026 |
| **Ներկայացման օր** | 10.06.2026 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Գոհար Գևորգյան<br>Ծրագրի համակարգողի պարտականությունները կատարող |

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

2. **Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման նյութական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**

| |
|---|
| **Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՍԴ մեթոդաբանությամբ:<br>**Միջոցառում 2.** Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:<br>**Միջոցառում 3.** Սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված ծառայությունների տրամադրում:<br>**Միջոցառում 4.** Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում: |

**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ՁԼՄ լուսաբանում:

**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:

**Միջոցառում 7.**

Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:

**Միջոցառում 8.** Ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպում:

**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով 3 նոր շահառուների ընդունելություն, կարիքների գնահատում փաստաթղթավորում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով 3 սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով 28 շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4.** Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5.**

- 01.06.2026թ-ին Ստեփանավանի այգում «Լիարժեք կյանք» ՀԿ-ն մասնակցել է Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

Յուրաքանչյուր երեխա պետք է լինի լսված և պաշտպանված՝ անկախ իր առանձնահատկություններից:

Միրոցառմանը մասնակցել են՝ ավելի քան 100 շահառու, որոնք շփվել են նույն օրը այգի հաճախող համայնքի մյուս երեխաներին հետ:

**Միջոցառում 6.** 21.04.2026 թ-ին կենտրոնի շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

- Դասընթացի թեմա՝ «Ինչպե՞ս ազատվել մտահոգություններից և կառուցել առողջ միտք ու կյանք»

Վարող՝ Հոլանդիայից ժամանած փորձագետ, թերապևտ և մարզիչ (քոուչ)՝ Գայանե Աբրահամյան

Մասնակիցների թիվ՝ 26

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 11 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առնչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցության և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 9.** Իրականացվել է գնահատում (ծրագրի 6 -րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շահառուների շուրջ 90 % մոտ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճ և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը
https://www.facebook.com/groups/738413854220041

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

**29.05.2026** թ-ին Ստեփանավանի կենտրոնի աշխատակիցներ Ելենա Շահնազարյանը, Լուսինե Ավետիսյանը և Սևակ Հակոբյանը մասնակցել են «Հավասարության և Մասնակցության Ապահովում Հաշմանդամություն Ունեցող Անձանց Համար» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ֆունկցիոնալության Գնահատման եւ աշխատանքային կարողությունների զարգացում» թեմայով դասընթացին:

**05.06.2026**թ-ին Ստեփանավանի կենտրոնի համակարգող Սևակ Հակոբյանը մասնակցել է «Երեխաների պաշտպանություն սեռական շահագործումից և սեռական բռնությունից» առցանց դասընթացին: Կազմակերպող՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

06.05.2026թ -ին Ստեփանավանի կենտրոնի աշխատակից Գոհար Գևորգյանը մասնակցել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային համաձնաժողովի նիստին:

**09.06.2026** թ -ին ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում, ՄԱԿ-ի կենտրոնակայանում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի մասնակից պետությունների 19-րդ համաժողովի (COSP19) պլենար նիստում հաստատվել է «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության հավատարմագրումը:

ս/թ հունիսի 9-ից 11 -ը կազմակերպության նախագահ Սուրեն Մաղաքյանը մասնակցել է COSP19 համաժողովին ներկայացնելով Հայաստանի հաշմանդամություն ունեցող անձանց ձայնը, ոլորտում առկա ձեռքբերումներն ու մարտահրավերները:

COSP19-ը հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ներառական քաղաքականությունների առաջխաղացման ամենաահեղինակավոր միջազգային հարթակներից մեկը, որը համախմբում է պետությունների, ՄԱԿ-ի կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ամբողջ աշխարհից:

Ծրագրի համակարգողի
պարտականությունները կատարող Գ. Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս. Մաղաքյան

2026-07-11 15:59:30 GMT+04:00 miD